



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 532-Ա

01 նոյեմբերի 2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18 - Ի N 151 - Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ
կետի, 34-րդ հոդվածի և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով
որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2018 թվականի
հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանում
ազդարարման համար պատասխանատու անձ նշանակելու մասին» N 151 - Ա որոշման
մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝

1) «Ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառումը և
ձևակերպումն իրականացնելու համար Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմում պատասխանատու անձ նշանակելու
մասին».

2) որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների հաշվառումը և
ձևակերպումն իրականացնելու համար Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմում պատասխանատու անձ նշանակել
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի օգնական Զանիկ
Բազեյանին:».

3) որոշման 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի օգնական Ջանիկ Բազեյանին՝ ղեկավարվել «Ազդարարման համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց ենթակա մարմիններում ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրության վարման կարգը սահմանելու մասին» N 272-Ն որոշման պահանջներով:»:

01.11.2023



X 

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN KAREN 3710840503

ՄԱՐԶՊԵՏ՝
Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ